Հավելված
Հաստատված է
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2008 թվականի ապրիլի 15 -ի
№ 189Լ որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Նախաբան

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (ասուհետև՝ հանձնաժողով) 2007 թվականին իր գործունեությունն իրականացրել է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով) 2007 թվականին գործել է հետևյալ կազմով.

Ռոբերտ Նազարյան՝ հանձնաժողովի նախագահ
Նիկոլայ Գրիգորյան՝ հանձնաժողովի նախագահի տեղակալ
Շիրազ Կիրակոսյան՝ հանձնաժողովի անդամ
Սամվել Արաբաջյան՝ հանձնաժողովի անդամ
Մուշեղ Կոշեցյան՝ հանձնաժողովի անդամ

Հանձնաժողովն իր աշխատանքը կազմակերպել է աշխատակազմի միջոցով (103 աշխատող, այդ թվում՝ 73 քաղաքացիական ծառայող), որն ունի հետևյալ կառուց-վածքային ստորաբաժանումները.

- սակագնային քաղաքականության վարչություն՝
  - ա) սակագնային բաժին,
  - բ) ֆինանսական վերլուծության բաժին,
- իրավաբանական և լիցենզավորման վարչություն,
- լիցենզավորված գործունեության մոնիթորինգի և ներդրումային ծրագրերի վարչություն՝

  ա) տեխնիկական մոնիթորինգի և փորձաքննության բաժին,

  բ) ներդրումային ծրագրերի բաժին,

- հեռահաղորդակցության վարչություն,
- սպառողների հետ կապերի բաժին,
- վարչափնտրեսական բաժին:

Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համակարգում է հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը:

1. Կարգավորման իրավական դաշտի կատարելագործում

Կարգավորվող ոլորտների օրենսդրական դաշտի կատարելագործումը շարունակական գործընթաց է և հանդիսանում է հանձնաժողովի կարևորագույն գործառույթներից մեկը:

Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների հաստատումից հետո հանձնաժողովի կողմից մշակվել և հաստատվել են էլեկտրական էներգիայի մատակարարման մատակարար-սպառող (բնակիչ), էլեկտրական էներգիայի մատակարարման (մատակարար-մինչև 6(10) կՎ լարման ցանցերից սնվող սպառող (բացառությամբ՝ բնակչության), էլեկտրական էներգիայի մատակարարման (մատակարար-6(10) կՎ և բարձր լարման ցանցերից սնվող սպառող (բացառությամբ՝ բնակչության) պայմանագրերի օրինակելի ձևերը:

Էներգետիկայի բնագավառի կարգավորման իրավական դաշտի կատարելագործման ուղղությամբ ևս 2007 թվականին մշակվել և հաստատվել են մի շարք իրավական ակտեր, մասնավորապես՝

ա) էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրաէներգիա արտադրող կայանների միանալու կարգը,

բ) մատակարարի և սպառողի (բացառությամբ՝ բնակչության) օպերատիվ փոխհարաբերությունների կարգը,

գ) Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միանալու կարգը և նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման վճարները:

Էներգետիկայի բնագավառում աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու և «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարումն ապահովելու նպատակով 2007 թվականի ընթացքում հանձնաժողովն իրականացրել է էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձանց միջև կնքված էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի առուվաճառքի (ծառայությունների մատուցման) 104 պայմանագրերի փորձաքննություն և գրանցում:

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական համայնքների ու դրանց անդամ պետությունների միջև կնքված գործընկերության և համագործակցության համաձայնագրի իրականացման ազգային ծրագրի շրջանակում, Եվրախորհրդարանի և Եվրախորհրդի 2004 թվականի փետրվարի 11-ի «Էներգիայի ներքին շուկայում ջերմության օգտակար պահանջարկի հիման վրա համակցված արտադրության խրախուսման և N92/42/EEC դիրեկտիվում փոփոխություններ կատարելու մասին» N2004/8/EC դիրեկտիվին համահունչ, հանձնաժողովը 2007 թվականին մշակել է օգտակար ջերմային պահանջարկի հիման վրա էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության (կոգեներացիա) սակագների սահմանման սկզբունքները, այդ համակարգերի համար էլեկտրական և ջերմային էներգիայի սակագների հաշվարկի մեթոդիկան, ինչպես նաև սահմանել է համակցված արտադրության տեղակայանքներից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի առավելագույն մեծությունն ու էլեկտրական և ջերմային էներգիայի անջատ արտադրության արդյունավետության բազային (հղումային) ցուցանիշները:

Նշված որոշումները համալրում են անհրաժեշտ նորմատիվային դաշտը՝ ՀՀ կառավարության 2006 թվականի ապրիլի 13-ի «Էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության տեղակայանքների օգտագործմամբ ջերմամատակարարման համակարգերի վերականգնման առաջնեկային ծրագրերի մասին» № 509Ն որոշման համաձայն Երևանի Ավան և Դավիթաշեն համայնքներում էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության տեղակայանքների օգտագործմամբ ջերմամատակարարման առաջնեկային ծրագրերն իրագործելու համար:

Հանձնաժողովը գործուն մասնակցություն է ունեցել «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Երկաթուղային տրանսպորտի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին» ՀՀ օրենքների մշակման աշխատանքներին՝ ներկայացնելով համապատասխան առաջարկություններ:

2.Լիցենզավորում

Հանձնաժողովը 2007 թվականի ընթացքում ստացել է էներգետիկայի բնագավառում բարդ ընթացակարգով լիցենզավորման՝ 48 և էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում պարզ ընթացակարգով լիցենզավորման՝ 126 հայտ: Քննարկումների արդյունքում էներգետիկայի բնագավառում տրվել է փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման՝ 30, էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայանի կառուցման՝ 1, կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայանի կառուցման՝ 1, էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայանում էլեկտրական էներգիայի արտադրության՝ 1, փոքր հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության՝ 15 լիցենզիա:

Էներգետիկայի բնագավառում ստացվել են լիցենզիաների գործողությունների ժամկետների երկարաձգման 16 հայտ, լիցենզիաների վերաձևակերպման՝ 4, լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ գույքը գրավ դնելուն համաձայնություն տալու՝ 14, գույքն օտարելուն համաձայնություն տալու՝ 13, բաժնետոմսեր վաճառելուն համաձայնություն տալու՝ 2, գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու՝ 2, արտադրական հզորության ավելացման՝ 3, փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման համար անհրաժեշտ հիմնական գույքի նկատմամբ իրավունքները փոխանցելուն համաձայնություն տալու՝ 2 դիմումներ, որոնք սահմանված կարգով քննարկվել և բավարարվել են: Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում ստացվել են նախկինում տրված լիցենզիաներն ու թույլտվություններն ուժը կորցրած ճանաչելու 301 դիմումներ, որոնք ևս բավարարվել են:

Ջրային համակարգում ընդունվել է ջրային համակարգի օգտագործման թույլտվությունների գործողությունների ժամկետների երկարաձգման 2 որոշում:

Հայտերի և դիմումների ուսումնասիրության արդյունքում ընդունվել են համապատասխան որոշումներ, իսկ բարդ ընթացակարգով տրված գործունեության լիցենզիաների համար մշակվել և հաստատվել են գործունեության պայմաններ:

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգման լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքների ներկայացման կարգի համաձայն՝ լիցենզիաների պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար 16 լիցենզավորված անձինք հանձնաժողովի համապատասխան որոշումների համաձայն՝ որպես ֆինանսական տույժ ընդհանուր գումարով շուրջ 52,7 միլիոն դրամ են փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

2007 թվականի ընթացքում հանձնաժողովի կողմից էներգետիկայի բնագավառում և ջրային համակարգում լիցենզիաների և թույլտվությունների տրամադրման, դրանց գործողությունների ժամկետների երկարաձգման, էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում պարզ ընթացակարգով լիցենզիաների տրամադրման համար տուրքերի գանձման արդյունքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է փոխանցվել շուրջ 225,4 մլն դրամ պետական տուրք:

3. Սակագնային քաղաքականություն

1. Էներգետիկայի բնագավառ.

Հանձնաժողովը հաշվետու տարվա ընթացքում հաստատել է վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ աշխատող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների հաշվարկման նոր մեթոդիկան՝ հաշվի առնելով վերջին տարիների ընթացքում ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի միջին ամսական փոխարժեքի տատանումները: Նշված մեթոդիկայի համաձայն՝ 2008 թվականի և դրան հաջորդող տարիների համար կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները այլևս կճշգրտվեն հաշվարկային բանաձևով, որը թույլ է տալիս հաշվի առնել ոչ միայն դրամի փոխարժեքի տատանման, այլ նաև սղաճի ազդեցությունը:

2008 թվականի համար նշված բանաձևով են հաշվարկվել և սահմանվել բնական ջրահոսքերի, ոռոգման համակարգերի և խմելու ջրատարների վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններից, հողմային էլեկտրակայաններից և կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները: Համապատասխանաբար վերանայվել են 26 փոքր հիդրոէլեկտրակայաններից և մեկ հողմային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

«Սևան-Հրազդանյան կասկադ» ՓԲԸ-ի գույքային համալիրը «RAO NORDIC» ընկերությանը փոխանցելու վերաբերյալ պաշտոնական փաստաթղթերի համաձայն՝ «Սևան-Հրազդանյան կասկադ» ՓԲԸ-ից առաքվող էլեկտրաէներգիայի սակագինը պետք է ապահովեր 25 մլն ԱՄՆ դոլարի վերադարձը ոչ ուշ, քան 5 տարվա ընթացքում: Վերջին տարիներին ՀՀ դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ, ինչպես նաև կայանից փաստացի առաքված էլեկտրաէներգիայի աճը հնարավորություն ընձեռեցին 25 մլն ԱՄՆ դոլարի վերադարձն ապահովել նախանշված ժամկետից շուտ՝ 2007 թվականի մայիս ամսին: Հաշվի առնելով այս հանգամանքը, հանձնաժողովը 2007 թվականին վերանայել է «Միջազգային էներգետիկ կորպորացիա» և «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ների կողմից առաքվող էլեկտրաէներգիայի (հզորության) սակագները:

Հիմք ընդունելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի համար հաստատված էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիայի պայմանները, որոնց համաձայն 2008 թվականի հունվարի 1 -ից սակագնի հաշվարկում ներառվող էլեկտրաէներգիայի կորուստների մեծությունը նվազեցվելու է մինչև 13%, էլեկտրաէներգիայի արտադրության ու սպառման կանխատեսումները և ֆինանսական հաշվետվություններով ներկայացված փաստացի ծախսերի ու իրականացրած կապիտալ ներդրումների վերլուծության արդյունքները, հաշվի առնելով նաև ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի միջին ամսական փոխարժեքի փոփոխությունը, ինչպես նաև միջուկային վառելիքի գնի նախատեսվող թանկացումը, հաշվետու տարվա վերջին հանձնաժողովը ճշգրտել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության գործող սակագնային մարժայի մեծությունը: Համապատասխանաբար վերանայվել են արտադրող կայաններից առաքվող էլեկտրաէներգիայի և էլեկտրաէներգետիկական համակարգին ծառայություններ մատուցող ընկերությունների սակագները:

Հանձնաժողովի կողմից հաստատված օգտակար ջերմային պահանջարկի հիման վրա համակցված արտադրության (կոգեներացիա) էլեկտրական և ջերմային էներգիայի սակագների հաշվարկի մեթոդիկայի համաձայն՝ սահմանվել են բարձր արդյունավետության տեղակայանքներում օգտակար ջերմային պահանջարկի հիման վրա համակցված եղանակով արտադրվող և առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի առավելագույն մեծությունը և էլեկտրական ու ջերմային էներգիայի անջատ արտադրության արդյունավետության բազային (հղումային) ցուցանիշները:

Հաշվետու տարում ուսումնասիրվել է ներկայացված հայտն ու սահմանվել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ում տեղակայված ջերմային և էլեկտրական էներգիայի համակցված արտադրությամբ կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը:

Ներկայացված համապատասխան հայտերի հիման վրա վերանայվել են մեկ և սահմանվել 15 նորակառույց փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

Հաշվետու ժամանակաշրջանում լրամշակվել են Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգը, փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի և ջեռուցման նպատակով օգտագործվող ջերմային էներգիայի սակագների հաշվարկման մեթոդիկաները և երկդրույք սակագնային համակարգում էլեկտրական էներգիայի (հզորության) առուվաճառքի պայմանագրային հզորությունների սահմանման սկզբունքները:

Հանձնաժողովը հաստատել է «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ-ից էլեկտրական և ջերմային էներգիայի առաքման համար վառելիքի տեսակարար ծախսի հաշվարկման մեթոդիկան, երկդրույք սակագնային համակարգում գործող էլեկտրակայանների 2008 թվականի պայմանագրային և տնօրինելի էլեկտրական հզորությունների չափաքանակները:

Ի կատարումն «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջների, 2007 թվականին հանձնաժողովը կազմել է 2008 թվականի համար կարգավորման պարտադիր վճար վճարողների անվանական կազմը և, հաշվի առնելով յուրաքանչյուր կարգավորման պարտադիր վճար վճարողների իրացման շրջանառությունը, հաշվարկել է կարգավորման պարտադիր վճարների 2008 թվականի դրույքաչափերը:

2. Ջրային համակարգ.

2007 թվականի փետրվար ամսին «Երևան Ջուր» ՓԲԸ-ն սակագների ճշգրտման առաջարկով դիմել է հանձնաժողով՝ հիմք ընդունելով բազիսային սակագների ճշգրտման սահմանված մեթոդաբանությունում ամրագրված ցուցանիշների, այն է՝ մանրածախ ջրամատակարարման ծավալների, տարեկան սղաճի, եվրո / դրամ փոխարժեքի և վարձակալ ընկերությանը մատակարարվող էլեկտրաէներգիայի սակագների նախորդ՝ հաշվարկային տարում տեղի ունեցած փոփոխությունների գնահատականները: Մանրածախ ջրամատակարարման ծավալների՝ ընկերության գնահատականների հիմնավորվածությունն ուսումնասիրելու նպատակով ստեղծված համատեղ աշխատանքային խմբի կատարած ծավալուն մոնիթորինգի և վերլուծության արդյունքների հիման վրա, ընկերության կողմից ներկայացված 2006 թվականի մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալները գնահատվել են շուրջ 4.73 մլն խորանարդ մետրով ավելի: Ելնելով սակագնի ճշգրտման մեթոդաբանությամբ ամրագրված բոլոր գործոնների ազդեցության հանրագումարից, հաձնաժողովն ընկերության առաջարկած 7.6 դրամի (առանց ԱԱՀ -ի) փոխարեն սակագնի ճշգրտման ընդունելի մեծություն է համարել 3 դրամը (առանց ԱԱՀ -ի):

Սպառողների համար կայուն սակագնային քաղաքականություն իրականացնելու նկատառումով, հանձնաժողովի և ընկերության փոխադարձ համաձայնությամբ, համապատասխան փոփոխություն կատարելով «Երևան Ջուր» ՓԲԸ-ի ջրային համակարգի օգտագործման թույլտվության պայմաններում, որոշվել է սակագնի ճշգրտման մեծություն համարվող 3 դրամը հավելել ընկերության կողմից սպառողներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման 2009 թվականի բազիսային սակագնին: Հաշվի առնելով նշված հանգամանքը, հանձնաժողովը վերահաստատել է «Երևան Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպառողներին խմելու

ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման գործող սակագները:

«Ոռոգում-ջրառ» ՓԲԸ-ի մասնաճյուղերում տեղի ունեցած կառուցվածքային (շահագործվող հիմնական միջոցների) փոփոխություններով պայմանավորված՝ ներկայացված հայտերի ուսումնասիրության արդյունքում վերանայվել են «Սևան-Հրազդանյան-ջրառ», «Ախուրյան-Արաքս-ջրառ», «Որոտան-Արփա-ջրառ» և «Դեբեդ-Աղստև-ջրառ» ՓԲԸ-ների սպասարկման տարածքում գտնվող ջրօգտագործողների ընկերություններին, ջրօգտագործողների ընկերությունների միություններին և այլ ջրօգտագործողներին վաճառվող ինքնահոս և մեխանիկական եղանակով մատակարարվող ոռոգման ջրի սակագները:

Հաշվետու տարում լրամշակվել են ոռոգման ջրի մատակարարման ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից ներկայացվող տեխնիկատնտեսական տեղեկատվությունների ձևերը:

3. Հեռահաղորդակցության համակարգ.

2007 թվականին հանձնաժողովը շարունակել է աշխատանքը հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների սակագների կարգավորման իրավական դաշտի ձևավորման ուղղությամբ: Լրամշակվել են հանձնաժողով ներկայացվող տեխնիկատնտեսական տեղեկատվությունների ձևերը: Համագոր-ծակցելով «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ՝ լրամշակվել են ընկերության կողմից բացառիկ իրավունքով մատուցվող հիմնական և ոչ հիմնական ծառայությունների սակագների սահմանման ու ճշգրտման համար ներկայացվող ծախսումների ֆորմատի ձևերը:

2007 թվականին «ԱրմենՏել» ՓԲԸ-ն հայտ էր ներկայացրել հանձնաժողով՝ վերանայելու ընկերության կողմից բացառիկ իրավունքով մատուցվող հիմնական և ոչ հիմնական ծառայությունների սակագները: Առաջարկվող սակագնային ճշգրտումների հիմնավորվածությունն ուսումնասիրելու նպատակով կազմակերպվել են մանրակրկիտ քննարկումներ, պահանջվել է ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ: Հանձնաժողովը բավարար հիմնավորված չհամարելով ծախսային որոշ հոդվածների առաջարկվող ճշգրտումը, համապատասխան որոշմամբ մերժել է «ԱրմենՏել» ՓԲԸ-ի առաջարկությունը, որից հետո հանձնաժողովի և ընկերության միջև սկսվել է սակագների ճշգրտման վերաբերյալ համաձայնության ձեռքբերման բանակցային գործընթացը: Արդյունքում՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն, ներկայացնելով համապատասխան հիմնավորումներ, առաջարկել էր իր կողմից բացառիկ իրավունքով մատուցվող հիմնական և ոչ հիմնական ծառայությունների գործող սակագները թողնել անփոփոխ՝ դրանք համարելով առավելագույն և վերահավասարակշռված սակագներ, որոնք հանձնաժողովի համապատասխան որոշմամբ հաստատվել են:

Հաստատվել է «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից մատուցվող կարգավորման ենթակա հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների առավելագույն սակագներից ցածր սակագների կիրառման կարգը:

Հաշվի առնելով «ԱրմենՏել» ՓԲԸ-ի առաջարկությունը՝ մինչև էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման գործառույթը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին անցնելը «ԱրմենՏել» ՓԲԸ-ի համար այլ իրավասու մարմինների կողմից սահմանված և այդ պահին գործող սակագների վերաբերյալ, հանձնաժողովը, կատարելով որոշակի լրամշակումներ, նշված սակագները սահմանել է որպես առավելագույն սակագներ:

4. Փոստային կապի բնագավառ.

2007 թվականի ապրիլ ամսին ընդունված «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ 2007 թվականի մայիս ամսից փոստային կապի բնագավառը ներառվել է հանրային ծառայությունների կարգավորման դաշտ: Այդ կապակցությամբ, հաշվետու ժամանակաշրջանում, համաձայն «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի դրույթների, «Հայփոստ» ՓԲԸ-ի համապատասխան մասնագետների ու ներկայացուցիչների ներգրավմամբ, հանձնաժողովը մշակել է փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման սակագների սահմանման ու վերանայման կարգը և փոստային կապի ազգային օպերատորի կողմից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ձևերը և ցանկը (հայտի փաթեթը):

4. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն

Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությունը, հանդիսանալով հանձնաժողովի կարևորագույն գործառույթներից մեկը, հնարավորություն է տալիս ֆինանսական հաշվետվությունների և տեղեկատվությունների հիման վրա գնահատել ընկերությունների, ինչպես նաև տվյալ բնագավառի ֆինանսական վիճակն ու գործունեության արդյունքները, օժանդակել կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունմանը և, որ ամենագլխավորն է, սակագների սահմանման և վերանայման, ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման և լիցենզիայի պայմանների վերահսկման նպատակով ստեղծել համապատասխան վիճակագրական տվյալների բազա: Այս առումով կարևորվում է կարգավորվող ոլորտների ընկերություններում ազգային հաշվային պլանին համապատասխանող հաշիվների և ենթահաշիվների նոր համակարգի ներդրումը, որը հնարավորություն է ընձեռում հստակ տարանջատել

հիմնական (լիցենզավորված) և ոչ հիմնական գործունեության եկամուտներն ու ծախսերը, կատարել եկամուտների և ծախսերի մանրամասն հաշվառում և վերլուծություն:

Նշված համակարգն արդեն ներդրվել է էլեկտրաէներգետիկայի և գազամատակարարման բնագավառների ընկերություններում, և դրանց հետ կապված լրամշակվել ու հաստատվել են ֆինանսական հաշվետվության նոր ձևեր:

Հաշվի առնելով էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերում ենթահաշիվների համակարգի ներդրման փորձը, 2007 թվականին այն ներդրվեց նաև խմելու ջուր մատակարարող ընկերություններում, իսկ 2008 թվականին աշխատանքներ կտարվեն նաև խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ձևերի լրամշակման ուղղությամբ:

2007 թվականին հաստատվել է նաև «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ներկայացման կարգը, որն էապես կնպաստի կարգավորվող ընկերության ծախսերի մոնիթորինգի արդյունավետության բարձրացմանը և առավել հիմնավորված սակագների սահմանմանը:

Էլեկտրաէներգետիկական և ջրային համակարգերի գործունեության մասին հանրությանը պարբերաբար իրազեկելու նպատակով հանձնաժողովի ինտերնետային կայքէջում (www.psrc.am) շարունակաբար հրապարակվում են կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները:

Ֆինանսատնտեսական վերլուծության կազմակերպման և կատարելագործման, ֆինանսական վերլուծության նպատակաուղղվածության և արդյունավետության բարձրացման աշխատանքները շարունակական զարգացում կունենան նաև 2008 թվականին:

5. Ներդրումային ծրագրերի համաձայնեցում, ապատողների ապահովման որակի ցուցանիշների սահմանում և վերահսկում

2007 թվականին հանձնաժողովի սահմանած կարգով շարունակվել են կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի ուսումնասիրության և համաձայնեցման գործընթացները: Հանձնաժողովի որոշումներով համաձայնություն է տրվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «ՀայՌուսգազարդ», «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ների ներդրումային ծրագրերին: Ուսումնասիրվել են ներդրումային ծրագրեր իրականացնող ընկերությունների 2006 թվականի ներդրումային գործունեության արդյունքները և 3 վերլուծական տեղեկանքներ են հրապարակվել հանձնաժողովի կայքէջում:

Հանձնաժողովի կարևորագույն գործառույթներից է նաև սպառողներին մատուցվող ծառայությունների որակի ցուցանիշների գնահատումն ու կարգավորվող ընկերություններին ներկայացվող պահանջների սահմանումը:

2007 թվականին առաջին անգամ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2007-2009 թվականների ներդրումային ծրագրի համաձայնեցման հետ մեկտեղ նույն ժամանակաշրջանի համար սահմանվել են սպառողների հոսանքազրկումների քանակի և տևողության, թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և տևողության բազիսային ցուցանիշների ծրագրային մեծությունները: Ներդրումային ծրագրերի համաձայնեցման գործընթացում նման մոտեցման նպատակը ընկերության կողմից իրականացվող ներդրումային ծրագրերն ավելի նպատակային դարձնելը և հետագայում դրանց արդյունքները ճիշտ գնահատելն է:

2007 թվականին լրամշակվել են 2006 թվականին հաստատված սպառողների սպասարկման որակի գնահատման նպատակով բնական գազի բաշխման լիցենզավորված գործունեություն իրականացնող «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության օրինակելի ձևերը: Ստեղծվող տեղեկատվական բազայի հիման վրա 2008 թվականին հանձնաժողովը կսահմանի «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի սպասարկման որակի բազիսային ցուցանիշները:

Քայլեր են ձեռնարկվում նաև ջրամատակարարման ոլորտում սպառողների սպասարկման որակի բարելավման ուղղությամբ: Դեռևս 2006 թվականին մշակվել և հաստատվել են խմելու ջուր մատակարարող ընկերություններում սպառողների սպասարկման որակի ցուցանիշների գրանցամատյանների և հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության օրինակելի ձևերը՝ սկիզբ դնելով այդ ցուցանիշների սահմանման համար անհրաժեշտ տեղեկատվական բազաների ձևավորման գործընթացին: 2007 թվականին «Նոր Ակունք», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Երևան Ջուր» ՓԲԸ-ներում իրականացվել են սպառողների սպասարկման որակի ցուցանիշների գրանցամատյանների ներդրման և 2006-2007 թվականների ընթացքում ընկերություններից ստացված տեղեկատվության հավաստիության ուսումնասիրություններ:

2007 թվականին հանձնաժողովը փոփոխել է «Հայջրմուղկոյուղի», «Երևան Ջուր» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների ջրամատակարարման տևողության նվազագույն պահանջների մասով գործող սկզբունքները:

Նոր սկզբունքների համաձայն, սկսած 2008 թվականից, ընկերությունները յուրաքանչյուր տարի հանձնաժողովի հաստատմանը կներկայացնեն սպառողների ջրամատակարարման տևողության փաստացի մեծությունները՝ տարեսկզբի դրությամբ և դրանց ծրագրային մեծությունները՝ հաջորդ տարեսկզբի համար: Առաջարկվող մոտեցման կիրառման արդյունքում հնարավոր կլինի ընկերություններին պահանջներ

առաջադրել յուրաքանչյուր տարի առաջին հերթին բարելավելու առավել կարճ ժամկետով ջրամատակարարում ունեցող սպառողների վիճակը և ելնելով յուրաքանչյուր տարվա փաստացի արդյունքներից՝ դինամիկ փոփոխել սահմանված ցուցանիշները:

2007 թվականին հանձնաժողովը շարունակել է կարգավորվող ընկերությունների կատարած գնումների գործընթացների ուսումնասիրությունը: Ուսումնասիրվել և վերլուծության են ենթարկվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «ՀայՌուսգազարդ», «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ների «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի և «Տրանսգազ» ՍՊԸ-ի կողմից հանձնաժողով ներկայացված գնումների եռամսյակային տեղեկատվությունները, համալրվել են տեղեկատվական բազաները, կազմվել է վերլուծական տեղեկանք, որը տեղադրվել է հանձնաժողովի կայքէջում:

Հիդրոէներգետիկայի բնագավառում ներդրումների խրախուսմանը միտված հանձնաժողովի կողմից վարվող քաղաքականության արդյունքում յուրաքանչյուր տարի արձանագրվում են նոր դրական արդյունքներ, որոնք վկայում են բնագավառի զարգացման կայուն տեմպերի մասին: 2007 թվականի տարեվերջի դրությամբ հանրապետությունում գործում է 61 փոքր հիդրոէլեկտրակայան, ևս 60-ը գտնվում է կառուցման փուլում: Գործող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 75 ՄՎտ, որոնք միջին տարեկան հաշվով արտադրում են շուրջ 244 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Կանխատեսվում է, որ գործող կայանների գումարային հզորությունը 2010 թվականին կկազմի շուրջ 220 ՄՎտ և դրանք տարեկան միջին հաշվով կարտադրեն 762 մլն կՎտժ էլեկտրաէներգիա:

Բնագավառում առկա խնդիրները վեր հանելու և լուսաբանելու նպատակով հանձնաժողովը իրականացրել է փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման աշխատանքների ընթացքի և բնագավառի զարգացման տեմպերի ուսումնասիրություն, կազմվել է համապատասխան վերլուծական տեղեկանք և տեղադրվել հանձնաժողովի կայքէջում:

Խրախուսելով փոքր ՀԷԿ-երի կառուցման ուղղությամբ իրականացվող ներդրումները, հանձնաժողովը հետևողականորեն հսկում է իր կողմից տրված լիցենզիաների պայմանների կատարումը՝ դրանք չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կիրառելով ֆինանսական տույժեր:

6. Հեռահաղորդակցության բնագավառ

Հանձնաժողովը 2007 թվականին մեծածավալ աշխատանք է իրականացրել էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի կարգավորման համար անհրաժեշտ իրավական ակտերի մշակման ուղղությամբ՝ դրանց մասնակից դարձնելով հասարակական կազմակերպությունների և էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում գործունեություն իրականացնող առանձին ընկերությունների:

Մասնավորապես, նախապատրաստական աշխատանքներ են տարվել «ԱրմենՏել» ՓԲԸ-ի ծառայությունների մատուցման բացառիկ իրավունքների վերացումից հետո ազատականացված շուկա մուտք գործող ընկերությունների և «ԱրմենՏել» ՓԲԸ-ի փոխհարաբերությունները կարգավորող, ինչպես նաև ազատականացված շուկայի պայմաններում լարային և անլար հասանելիության, այդ թվում՝ լայնաշերտ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ իրավական ակտերի մշակման ուղղությամբ, որոնց կիրարկումը կհանգեցնի շուկայում նման ծառայություններ մատուցող ընկերությունների քանակի աճի և կնպաստի մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանն ու տեսականու ընդլայնմանը:

Զուգահեռ շարունակվում են նպատակաուղղված աշխատանքները մշակելու և ընդունելու «ԱրմենՏել» և «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ների կողմից սպառողների սպասարկման որակի բարձրացմանը միտված իրավական ակտեր:

Հարկ է անդրադառնալ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքում և «ԱրմենՏել» ՓԲԸ-ին տրամադրված թիվ 60 լիցենզիայում առկա որոշ հասկացությունների, մասնավորապես, ձայնային ծառայության բնորոշման տարակարծիք մեկնաբանման հետևանքներին, երբ էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում գործունեություն իրականացնող անձինք որպես ձայնային ծառայություն դիտարկում էին միայն 400 միլիվայրկյանից պակաս ցանցային ուշացումներ ունեցող հաղորդագրությունները:

Նպատակ ունենալով կանոնակարգել ձայնային ծառայության մատուցման էությունը և հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը, հանձնաժողովի 2007 թվականի հունվար ամսին ընդունված որոշմամբ ձայնային ծառայությունը դասակարգվեց որպես հաղորդակցության կողմերի համար ընկալելի տեղական (ներպետական) կամ միջազգային երկկողմ ձայնային հաղորդակցություն՝ անկախ դրա հիմքում ընկած տեխնոլոգիայից (ներառյալ՝ ինտերնետային արձանագրությունը) և ցանցային ուշացումներից, որի համար ամբողջությամբ կամ մասնակիորեն օգտագործվում է Հայաստանի Հանրապետության հանրային համակցված ցանցը:

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածը և բաժանորդների սպասարկումը լավագույնս կազմակերպելու նպատակով, հանձնաժողովը 2007 թվականի մարտ ամսին հանձնարարել է «ԱրմենՏել» և «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ներին հանձնաժողովի կողմից սահմանված յուրաքանչյուր աշխարհագրական տարածքում ստեղծել կամ պահպանել և կադրերով համալրել առնվազն մեկ գործառնական գրասենյակ:

Այդ առնչությամբ հանձնաժողովը մոնիթորինգ է անցկացրել «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի գործառնական գրասենյակներում և դրական գնահատել նրանց աշխատանքը, ինչը լուսաբանվել է նաև ԶԼՄ-ներով:

2008 թվականին նախատեսվում է նման մոնիթորինգ անցկացնել նաև «ԱրմենՏել» ՓԲԸ-ում:

2007 թվականին սկսվել են սպառողների սպասարկման որակի բարձրացմանն ուղղված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված (ֆիքսված) ցանցերով հեռախոսային ծառայությունների մատուցման և այդ ծառայություններից օգտվելու կանոնների նախագծի մշակման աշխատանքները, որոնք նախատեսվում է հաստատել 2008 թվականի 1-ին կիսամյակում: Հասարակական լայն քննարկումների արդյունքում ձևավորվել է կանոնների մի համապարփակ նախագիծ, որում ներառվել են ոչ միայն առ այսօր գործող կանոնների դրական կողմերը, այլև կանոնակարգվել են սպառողների և ծառայություններ մատուցողների փոխհարաբերությունները ակնկալվող մրցակցային շուկայում:

Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման մոտակա և հեռահար նպատակները որոշելու և դրանց իրականացումն ուղենշելու նպատակով հանձնաժողովը 2007 թվականին Համաշխարհային բանկի աջակցությամբ մշակել և հաստատել է էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականությունը, որի իրագործմանն ուղղված միջոցառումները մշակվել են՝ հաշվի առնելով Առևտրի համաշխարհային կազմակերպության, Եվրոպական միության, Հեռահաղորդակցության միջազգային միության առաջարկներն ու կարգավորման ստանդարտները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հաղորդակցության շուկայի առանձնահատկություններն ու առկա իրավիճակը:

Ելնելով երկրի ազգաբնակչության անվտանգության շահերից, ինչպես նաև, նպատակ ունենալով պաշտպանել հանրային շարժական բջջային կապի ծառայություններից օգտվող բաժանորդների շահերը, հանձնաժողովը սահմանել է բջջային կապի կանխավճարային հեռախոսաքարտերի տրամադրման նոր ընթացակարգ, որի համաձայն 2007 թվականի հուլիսի 1-ից բջջային կապի ծառայություններ մատուցողները կանխավճարային հեռախոսաքարտերը բաժանորդներին տրամադրում են անձը հաստատող փաստաթղթի առկայությամբ, գրավոր պայմանագրերի հիման վրա:

Նույն որոշման համաձայն, բջջային կապի ծառայություններ մատուցողները, նախկինում իրացված կամ շրջանառության մեջ գտնվող կանխավճարային հեռախոսաքարտեր ունեցող բաժանորդների հետ պետք է վերակնքեն գրավոր պայմանագրեր՝ դրանց կցելով բաժանորդի անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

2007 թվականին «Վիմպելկոմ» ընկերության հետ համագործակցության արդյունքում վերացվել են «ԱրմենՏել» ՓԲԸ-ին թիվ 60 լիցենզիայով վերապահված

բացառիկ իրավունքները: Հանձնաժողովը 2007 թվականի օգոստոս ամսին հաստատել է թիվ 60 լիցենզիայի փոփոխված տարբերակը, որով «ԱրմենՏել» ՓԲԸ-ին իրավունք է վերապահվում էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցել միայն ոչ բացառիկ իրավունքներով: Այս որոշմամբ ամբողջովին ազատականացվել է էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների շուկան՝ հնարավորություն ընձեռելով այլ լիցենզավորված ընկերություններին Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում մրցակցային հիմունքներով մատուցել հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ: Արձագանքելով որոշմանը, հանձնաժողով են դիմել բազմաթիվ ընկերություններ՝ հանրային էլեկտրոնային ցանցի շահագործման, ինչպես նաև միջազգային ելքային ձայնային ծառայությունների մատուցման լիցենզիաներ ու համարների զբաղեցման թույլտվություններ ստանալու հայտերով:

Այս բարեփոխումը էական խթան կհանդիսանա տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման, ինչպես նաև տեղեկատվական հասարակության կայացման անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման համար: Ակնկալվում է, որ ազատականացման շնորհիվ տեղական և օտարերկրյա ներդրողների համար կմեծանա տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտի ներդրումային գրավչությունը, հանրապետություն մուտք կգործեն այդ ոլորտի ժամանակակից ստանդարտները, տեխնոլոգիաները և միջազգային լավագույն փորձը:

2007 թվականի օգոստոս ամսին հանձնաժողովը հաստատել է Հայաստանի Հանրապետության համարագրման պլանը, որով ձևավորվել է հանրապետությունում էլեկտրոնային հաղորդակցության համար օգտագործվող համարային շարքերի, նույնացման և կարճ կոդերի օգտագործումը կարգավորող՝ միջազգային պահանջներին համապատասխանող ռեժիմը:

Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման շուկայի ազատականացումը նոր խնդիրներ էր առաջ բերել նրանում գործունեություն իրականացնող անձանց համար՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի փոխգործակցության և համատեղ աշխատանքի առումով: Մասնավորապես, անհրաժեշտություն էր առաջացել սահմանելու գերիշխող օպերատորների և այլ օպերատորների կողմից շահագործվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի փոխկապակցման պայմանները, ինչը հանձնաժողովի կողմից իրականացվել է «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի և այլ օպերատորների հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված ցանցերի փոխկապակցման օրինակելի առաջարկի հաստատմամբ:

Նպատակ ունենալով վերլուծել և կանոնակարգել տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող անձանց կողմից

հանրապետությունում շրջանառվող տեղեկատվության ծավալները և տեղեկատվական հոսքերի թողունակությունը, ինչպես նաև այդ ծառայությունների շուկայում առողջ մրցակցային միջավայրի կայացումը երաշխավորելու համար, հանձնաժողովը 2007 թվականին հաստատել է փվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների ձևը:

Հեռավոր գյուղական շրջաններում հեռահաղորդակցության ենթակառուցվածքների զարգացման, բնակչությանը բացի հեռախոսային հիմնական ծառայություններից նաև տեղեկատվական նոր տեխնոլոգիաների վրա հիմնված ծառայությունների հասանելիությունը և մատչելիությունը ապահովելու նպատակով Համաշխարհային բանկի աջակցությամբ հանձնաժողովը նախաձեռնել է և ներկայումս իրականացվում է Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտում համընդհանուր ծառայությունների հիմնադրամի ստեղծման և ներդրման ծրագիրը, որի իրականացումը կնպաստի նաև նշված շրջանների տնտեսական զարգացման աճին և աղքատության հաղթահարմանը:

Հանրապետությունում անլար հաղորդակցական տեխնոլոգիաների լայնատարած ներդրումը և զարգացումը խրախուսելու, ինչպես նաև ռադիոհաճախականությունների տիրույթի՝ որպես սահմանափակ ռեսուրսի, արդյունավետ օգտագործումն ապահովելու նպատակով հանձնաժողովը պարզեցրել է ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման գործընթացը՝ համապատասխան որոշմամբ էականորեն կրճատելով թույլտվությունների տրամադրման համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Այս որոշումը կնպաստի հանրապետությունում անլար հասանելիության նոր տեխնոլոգիաների ներդրմանը և համապատասխանաբար անլար հաղորդակցության ժամանակակից ենթակառուցվածքների ձևավորմանը, ինչը կխթանի նաև տնտեսության այլ ճյուղերի համընթաց զարգացումը:

2007 թվականի ընթացքում հանձնաժողովը տրամադրել է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի՝ 31, տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման՝ 43, ձայնային ծառայությունների մատուցման՝ 83 լիցենզիա, ինչպես նաև համարների զբաղեցման՝ 67 և ռադիո-հաճախականությունների օգտագործման՝ 129 թույլտվություն:

Հարկ է նշել, որ 2007 թվականին հանձնաժողովի կողմից գանձված ռադիոհաճախականությունների թույլտվությունների տրամադրման և ռադիոհաճախականությունների օգտագործման վճարների գծով բյուջետային մուտքերը կազմել են շուրջ 4,5 մլրդ դրամ, որն աննախադեպ ցուցանիշ է:

7. Աշխատանքը սպառողների հետ

2007 թվականին շարունակվել են սպառողների հետ տարվող ամենօրյա աշխատանքները: Տարվա ընթացքում սպառողներից ստացվել են 898 հարցադրումներ և բողոքներ, որոնցից 162-ը՝ գրավոր , 736-ը՝ հրատապ հեռախոսով և սպառողների ընդունելության ընթացքում: Դրանցից 643-ը դրական լուծում են ստացել, 24-ի վերաբերյալ մատակարար կազմակերպություններում անց են կացվում ուսումնասիրություններ, 38 բողոքներում ներկայացված փաստերը չեն համապատասխանել իրականությանը, 193-ի վերաբերյալ տրվել են պարզաբանումներ՝ գործող օրենքների, կարգերի և այլ նորմատիվ ակտերի համաձայն:

Սպառողների բողոքները տեղում ուսումնասիրելու նպատակով էլեկտրաէներգիայի, գազի, խմելու ջրի մատակարարների հետ համատեղ իրականացվել են ստուգայցեր, ձեռնարկվել են համապատասխան միջոցներ բարձրացված հարցերը կարգավորելու ուղղությամբ:

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, ինչպես նախորդ տարիներին, կազմակերպվել են սպառողների շահերի պաշտպանության խնդիրներին և նրանց բողոքներին առնչվող քննարկումներ:

8.Գործակցությունը զանգվածային լրատվամիջոցների հետ

Հանձնաժողովի գործունեության նկատմամբ 2007 թվականի ընթացքում լրատվամիջոցների կողմից արձանագրվել է հետաքրքրության զգալի աճ: Նրանց մասնակցությունը հանձնաժողովի նիստերին, ընդունված որոշումների պարբերաբար լուսաբանումը ստեղծել են հանձնաժողովի առավել թափանցիկ եւ հրապարակային գործունեության լավագույն նախապայմաններ: Նիստերի ավարտից հետո լրագրողներին հնարավորություն է տրվել հավելյալ պարզաբանումներ ստանալ, հանրության համար առավել հետաքրքիր խնդիրների վերաբերյալ անցկացնել ճեպազրույցներ ինչպես հանձնաժողովի աշխատակազմի, այնպես էլ հրավիրված ընկերությունների պատասխանատուների հետ: Հանրության համար կարևոր և հետաքրքրություն ներկայացնող որոշումների մասին մամլո հաղորդագրությունները, հանձնաժողովի գործունեությանն առնչվող պաշտոնական տեղեկատվությունները հրապարակվել են մամուլում, ստեղծվել համացանցով, ուղարկվել էլեկտրոնային փոստով: Տեղեկատվության տարածումն ընդգրկել է հանրապետության ողջ տարածքը:

Լրատվամիջոցների հետ անմիջական, հեռախոսային, էլեկտրոնային ամենօրյա շփումները տվել են իրենց ցանկալի արդյունքը. ձևավորվել է փոխադարձ վստահության, հարգանքի մթնոլորտ, որը նպաստել է արդյունավետ փոխգործակցության ձևավորմանը:

Լրատվական գործակալությունների, հեռուստաընկերությունների, ինչպես նաև տպագիր մամուլի միջոցով հանձնաժողովը հետևողաբար ծանուցումներ և հաղորդագրություններ է ներկայացրել հանձնաժողովի նիստերի և հասարակական լսումների մասին, որտեղ քննարկվել են սպառողների շահերին առնչվող խնդիրներ: Սպառողների իրավունքների իրազեկման մակարդակի անընդմեջ բարձրացման նպատակով հանձնաժողովի համապատասխան մասնագետները տարբեր լրատվամիջոցներով պարբերաբար հանդես են եկել ելույթներով, պարզաբանումներով:

Նախորդ տարվա համեմատությամբ զգալիորեն ավելացել է հանձնաժողովի կայքէջից օգտվող այցելուների թիվը, որոնց գնահատմամբ՝ հանձնաժողովի կայքէջը բավական արդյունավետ, արագագործ աշխատանքի՝ լրատվամիջոցներին ընձեռված հնարավորություն է:

Ինչպես նախընթաց տարիներին, 2007 թվականին ևս հանձնաժողովի կողմից հավուր պատշաճի քննության են առնվել հանրային ծառայությունների ոլորտներին վերաբերող ՁԼՄ-ների արձագանքները: Հանձնաժողովի միջամտությամբ ծառայություն մատուցող ընկերությունները որոշ ահազանգերի վերաբերյալ պաշտոնական պարզաբանումներ են ներկայացրել լրատվամիջոցներին, կազմակերպվել են համատեղ քննարկումներ՝ սպառողների, ծառայություններ մատուցող ընկերությունների եւ լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ:

9. Համագործակցություն

Հանձնաժողովը, 2007 թվականին համագործակցելով Հեռահաղորդակցության միջազգային միության (ITU), Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովների տարածաշրջանային ընկերակցության (ERRA), ԱՊՀ էլեկտրաէներգետիկական խորհրդի գործադիր կոմիտեի, Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) «Բեռնինգ Փոյնթ» խորհրդատվական ընկերության, ԱՄՆ-ի էներգետիկայի ընկերակցության հետ, իրականացրել է կարգավորման բնագավառներում համընդհանուր ծառայությունների մատուցման փորձի ուսումնասիրություն:

Մասնավորապես, հանձնաժողովի աշատակիցները մասնակցել են Էնեգետիկայի կարգավորող մարմինների տարածաշրջանային ընկերակցության (ERRA) սակագնային և լիցենզիոն կոմիտեի 7-րդ ամենամյա կոնֆերանսին, գնագոյացման և սակագնային կոմիտեի նիստերին, լիցենզավորման կոմիտեի, իրավական կարգավորման աշխատանքային խմբի հերթական հանդիպումներին:

Միջազգային լավագույն փորձի վերաբերյալ համընդգրկուն տեղեկատվություն ստանալու և այն Հայաստանի Հանրապետության առանձնահատկություններից ելնելով տեղայնացնելու նպատակով, հանձնաժողովը մասնակցել է Հեռահաղորդակցության միջազգային միության (ITU) կազմակերպած կարգավորողների համաշխարային

գիտաժողովի, էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի ցուցանիշների հավաքագրման համաժողովի և «Բեռինգ Փոյնթ» խորհրդատվական ընկերության կազմակերպած «Հաջորդ սերնդի ցանցեր» փոխգործակցության ծրագրի աշխատանքներին:

Հանձնաժողովի աշխատակիցները 2007 թվականին մասնակցել են նաև ԱՊՀ էլեկտրաէներգետիկական խորհրդի գործադիր կոմիտեի կողմից կազմակերպված ԱՊՀ անդամ երկրների ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորման և էլեկտրաէներգետիկայի բնագավառում ԱՊՀ անդամ երկրների համագործակցության ռազմավարության իրականացման կոորդինացիոն խորհրդի նիստերի աշխատանք-ներին:

Միջազգային փորձի ուսումնասիրման ու վերապատրաստման նպատակով հանձնաժողովի մասնագետները 2007 թվականին մասնակցել են հեռահաղոր-դակցության ոլորտի կարգավորմանն առնչվող խնդիրների վերաբերյալ սեմինարին, Եվրոպական հանձնաժողովի և INOGATE միջազգային կազմակերպության աջակցությամբ անցկացված «Էլեկտրամատակարարման կարգավորումը՝ ժողովրդին ծառայելու հիմնական նպատակն է» թեմայով դասընթացին և «Կենտրոնական Եվրոպայում տարածաշրջանային էլեկտրաէներգիայի առևտրի զարգացում» և «Եվրոմիության ջրային օրենսդրություն» թեմաներով ուսումնական այցերին:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի գործունեության ֆինանսավորումը

N	Ծախսի անվանումը	Հաստատված բյուջե /հազ.դրամ/	Տարեկան ճշտված բյուջե /հազ.դրամ/	Ֆինանսավորում /հազ.դրամ/
	Ընդամենը ծախսեր	370515.6	370515.6	364458.3
1.	Աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարումներ	285012.0	285012.0	285012.0
2.	Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	29792.6	29792.6	29792.0
3.	Գրասենյակային ապրանքներ և նյութեր /քարթրիջներ, թուղթ, տնտեսական ապրանքներ/	5352.5	5352.5	5294.7
4.	Գույք և սարքավորումներ /մանրարժեք գույք/	250.0	250.0	240. 4
5.	Այլ ծախսեր	500.0	500.0	475.0
6.	Գործուղումներ, ծառայողական ուղևորություններ	9880.0	9880.0	5190.4
7.	Տրանսպորտի պահպանման ծախսեր	8964.5	8964.5	8769.8
8.	Կապի ծառայությունների վճար	6427.8	6427.8	5999.4
9.	Վառելիքի և ջեռուցման ծախսեր	950.0	950.0	950.0
10.	Էլեկտրաէներգիայի ծախսեր	4240.0	4240.0	4240.0
11.	Ջրմուղ կոյուղուց օգտվելու վարձ	200.0	200.0	200.0
12.	Այլ կոմունալ ծախսեր /աղբահանություն/	50.0	50.0	-
13.	Հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարների կատարման ծախսեր	80.0	80.0	69.0
14.	Ներկայացուցչական ծախսեր	1540.0	1540.0	1080.7
15.	Այլ ծառայությունների ձեռք-բերման ծախսեր /ERRA-անդամավճար, թերթերում տպագրություն, համակարգչային սարքավորումների վերանորոգում/	3307.5	3307.5	3208.1
16.	Սարքերի, սարքավորումների ձեռքբերում /համակարգչային տեխնիկայի /	2448.7	2448.7	2440.7
17.	Տրանսպորտային միջոցների ձեռքբերում	11000.0	11000.0	10980.0
18.	Ակտիվների ձեռքբերում /գրասենյակային կահույք/	520.0	520.0	516.0